ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«----» հունիսի 2011թ. N----- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ «ԳԵՂԵՑԻԿ ԵՐԵՎԱՆ» ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակի «Գեղեցիկ Երևան» ծրագրին՝ համաձայն հավելվածի:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի համաֆինանսավորումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ «ԳԵՂԵՑԻԿ ԵՐԵՎԱՆ» ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետի և Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգող Դաֆինա Գերչևայի՝ փետրվարի 14-ին տեղի ունեցած հանդիպման արդյունքում ՄԱԶԾ Հայաստանյան գրասենյակի կողմից 01.03.2011թ. հ.L89/2011 գրությամբ ներկայացվեց համատեղ հետաքրքրություն հանդիսացող «Գեղեցիկ Երևան» ծրագրի իրականացման առաջարկ: Առաջարկը հավանության արժանացավ հասցեագրված բոլոր ստորաբաժանումների կողմից և արդյունքում առաջարկվեց համագործակցել կառույցի հետ «Գեղեցիկ Երևան» ծրագրի շուրջ:

ՄԱԶԾ Հայաստանյան գրասենյակի հետ տեղի ունեցած բանակցությունների արդյունքում ձեռք բերվեց նախնական պայմանավորվածություն «Գեղեցիկ Երևան» ծրագրի շրջանակներում կնքել պայմանագիր 2011-2012թթ. համար, որը նախատեսում է Երևան քաղաքում կանաչապատմանը և բակերի բարեկարգմանն ուղղված 184,8 մլն ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ծրագրի իրականացում, որի նախապայման է հավասար բաշխմամբ համաֆինանսավորումը: Վերջինս ենթադրում է Երևանի քաղաքապետարանի կողմից 2011թ. 27,72 մլն ՀՀ դրամի, իսկ 2012թ. 64,68 մլն ՀՀ դրամ գումար հատկացում ՄԱԾԶ-ի տնօրինությանը «Գեղեցիկ Երևան» ծրագրի իրականացման նպատակով:

Երևանի քաղաքապետի 25.05.2011թ. հ.02/9-12842հ հանձնարարականի հիման վրա որոշվեց «Գեղեցիկ Երևան» ծրագրի հիմնական ուղղությունները, որոնք են՝ Երևան քաղաքի հուշարձանների նորոգումը և հարակից տարածքների բարեկարգումը, լուսավորության անցկացումը, ոռոգման ցանցի անցկացումը, քաղաքի բարեկարգման կարիք ունեցող շենքերի արտաքին տեսքի վերանորոգման աշխատանքները:

2011թ. համար առաջարկվել է հուշարձանների բարեկարգման՝ Ստեփան Շահումյանի արձանի և նրա հարակից տարածքի (հուշարձանների բարեկարգման համար 2011թ. բյուջեով նախատեսված է 20 մլն ՀՀ դրամ) և շենքերի արտաքին տեսքի վերանորոգման (2011թ. բյուջեով նախատեսված է 300 մլն ՀՀ դրամ) աշխատանքներ ընդհանուր 55.44 մլն ՀՀ դրամի՝ հաշվի առնելով ՄԱԶԾ-ի կողմից 27.72 մլն ՀՀ դրամ համաֆինանսավորումը:

2012թ. համար առաջարկվել է նախատեսել հուշարձանների բարեկարգման՝ Վարդան Մամիկոնյանի հուշարձանի և Եղիշե Չարենցի հուշահամալիրի պատվանդանների և նրա հարակից տարածքի բարեկարգման, լուսավորության, շենքերի անբարեկարգ ճակատների վերանորոգման (նաև ոռոգման ցանցի անցկացման) ընդհանուր 129.36 մլն ՀՀ դրամի նախատեսվող աշխատանքները, հաշվի առնելով ՄԱԶԾ-ի կողմից 64.68 մլն ՀՀ դրամ համաֆինանսավորումը:

Ծրագրի իրականացման արդյունքում վերոնշյալ ուղղություններով 184.8 մլն ՀՀ դրամ արժողությամբ աշխատանքները Երևանի քաղաքապետարանի համար կկազմի 92.4 մլն ՀՀ դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ «ԳԵՂԵՑԻԿ ԵՐԵՎԱՆ» ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակի «Գեղեցիկ Երևան» ծրագրին մասնակցելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ «ԳԵՂԵՑԻԿ ԵՐԵՎԱՆ» ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Միավորված Ազգերի Զարգացման Ծրագրի Հայաստանյան գրասենյակի «Գեղեցիկ Երևան» ծրագրին մասնակցելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2011թ. բյուջեում եկամուտների և ծախսերի էական փոփոխություն չի նախատեսվում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված
Երևանի ավագանու

«__» հունիսի 2011թ. N ____ որոշման

«Գեղեցիկ Երևան» ծրագրի մասին

Երևան քաղաքը հարուստ է պատմական և մշակութային հուշարձաններով, ինչպես նաև մշակութային նշանակություն ունեցող շենքերով, որոնք ներկա դրությամբ բարեկարգման և վերանորոգման անհրաժեշտություն ունեն: Նշված խնդրի շրջանակներում Երևանի քաղաքապետարանը և ՄԱԶԾ Հայաստանյան գրասենյակը ձեռնամուխ են եղել համատեղ հետաքրքրություն հանդիսացող «Գեղեցիկ Երևան» ծրագրի շուրջ համագործակցությանը:

Նպատակը: Ծրագրի նպատակն է, համատեղ ֆինանսական միջոցների կիրառմամբ, Երևան քաղաքի զարգացման 2011թ. ծրագրով և/կամ 2012թ. նախատեսվող վատ վիճակում գտնվող հուշարձանների նորոգումը, ինչպես նաև հարակից տարածքների բարեկարգումը, արտաքին լուսավորության անցկացումը և շենքերի անբարեկարգ ճակատների վերանորոգումը:

Շահառուներ: Ծրագրի շահառուներն են քաղաքի բնակիչները, զբոսաշրջիկները:

Ծրագրի նկարագրությունը և բյուջեն: «Գեղեցիկ Երևան» ծրագիրը իրականցվելու է 2011-2012թթ., որը նախատեսում է Երևան 184,8 մլն. ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ ծրագրի իրականացում՝ հավասար բաշխմամբ համաֆինանսավմամբ: Վերջինս ենթադրում է, որ Երևանի քաղաքապետարանը ՄԱԶԾ-ին համաֆինանսավորման հիմունքներով պատրաստակամ է հատկացնել գումար Ծրագրի իրականացման նպատակով: Այսինքն, քաղաքապետարանը 2011թ. ՄԱԶԾ-ի տնօրինությանը հատկացնելու է 27,72 մլն ՀՀ դրամ, իսկ 2012թ. 64,68 մլն ՀՀ դրամ գումար և հաշվի առնելով ՄԱԶԾ-ի նույնչափ հատկացումը ծրագրի իրականացման աշխատանքներին՝ 2011թ. կիրականացվի 55.44 մլն ՀՀ դրամ արժողությամբ ծրագիր, իսկ 2012թ.՝ 129.36 մլն ՀՀ դրամ արժողությամբ: Հատկացումից կատարվում է ծախսերի փոխհատուցում՝ այն անուղղակի ծախսերի դիմաց, որոնք կատարվել են ՄԱԶԾ կենտրոնական և հայաստանյան գրասենյակների կառույցների կողմից Կառավարման ընդհանուր աջակցության (ԿԸԱ) ծառայություններ մատուցելիս:

Ծրագրի շրջանակներում 2011թ. համար նախատեսվում է Ստ. Շահումյանի հուշարձանի պատվանդանի և նրա հարակից տարածքի բարեկարգման, ինչպես նաև քաղաքի տարբեր վարչական շրջաններում շենքերի արտաքին տեսքի վերանորոգման աշխատանքներ: Հաշվի առնելով, որ Երևան քաղաքի հուշարձանների նորոգման և հարակից տարածքների բարեկարգման աշխատանքների իրականացման համար

նախատեսված է 20 մլն ՀՀ դրամ, իսկ Երևան քաղաքի շենքերի ֆասադների վերանորոգման համար՝ 300 մլն ՀՀ դրամ, «Գեղեցիկ Երևան» ծրագրի իրականցման արդյունքում համապատասխան հոդվածներով աշխատանքների իրականացման տնտեսում տեղի կունենա:
2012թ. համար նախատեսվում է Վարդան Մամիկոնյանի հուշարձանի և Եղիշե Չարենցի հուշահամալիրի պատվանդանների և նրանց հարակից տարածքների բարեկարգման, լուսավորության աշխատանքներ և տարբեր վարչական շրջաններում շենքերի արտաքին տեսքի վերանորոգման աշխատանքներ:

Ծրագրի ակնկալվող արդյունքն է Երևան քաղաքի արտաքին տեսքի բարելավում, որը անուղղակիորեն կնպաստի զբոսաշրջիկության զարգացմանը:

Ծրագիրը նախատեսում է աշխատանքային պլանի կազմում, որը կներառի հետևյալ քայլերը՝

Փուլ 1. Համատեղ խորհդակցությամբ վերանորոգման ենթակա հուշարձաններ, հարակից տարածքում նախատեսվող աշխատանքների, քաղաքի տարբեր վարչական շրջաններում՝ արտաքին բարեկարգում պահանջող շենքերի հստակեցում և հաստատում, որոնց ընտրությունը կիրականցվի արտաքին բարեկարգման Երևանի քաղաքապետարանի որդեգրած առաջնահերթությունից ելնեով: Արդյունքում կկազմվի համապատասխան նախահաշիվ:

Փուլ 2. Առաջնահերթ աշխատանքների իրագործման ժամանակացույցի մշակում և իրագործում:

Փուլ 3. Մոնիտորինգ, գնահատում: Ծրագրի կենսափուլի ընթացքում ՄԱԶԾ-ն Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ կստեղծի մեխանիզմ, որպեսզի վերահսկի իրականացման գործընթացը և գնահատի դրա ձեռքբերումները:

Ծրագրի իրագործումը: Ծրագիրը անմիջականորեն կիրագործվի ՄԱԶԾ-ի կողմից՝ կիրառելով իր փորձը համայնքային զարգացման ոլորտում: Գեղեցիկ Երևան ծրագրի իրագործման սխեման պահանջում է պետական և մասնավոր գործակալությունների ցանցի համագործակցություն և ակտիվ աջակցություն: Ծրագրի ողջամիտ իրագործման հաջողությունն ապահովելու համար նախատեսվում է ստեղծել վերստուգող հանձնաժողով, որի անդամներ հանդես կգան Երևանի քաղաքապետարանը, ՄԱԶԾ-ն և այլ համապատասխան հաստատություններ: Վերստուգող հանձնաժողովը սկզբունքորեն կծառայի որպես միջգերատեսչական համակարգող մարմին, որը պարբերաբար հանդիպումներ կունենա, որպեսզի սահմանի միջամտությունների տարածքները, ինչպես նաև գնահատի առաջընթացը: Վերստուգող հանձնաժողովի իրավասությունները կամրագրվեն պայմանագրում:

ՄԱԶԾ-ի Հայաստանյան Գրասենյակը պատասխանատվություն է կրելու ֆինանսական և մարդկային ռեսուրսների կառավարման համար: ՄԱԶԾ-ն կունենա ընդհանուր պատասխանատվություն արտադրության արդյունքների և նախատեսված

գործունեությունների իրագործման համար: ՄԱԶԾ-ի ծրագրային գործունեության և պաշարների օգտագործման հաշվետվությունը ապահովելու համար կկիրառվի PRINCE2 ծրագրավորման և կառավարման մեթոդաբանությունը: ՄԱԶԾ-ի կառավարման ֆինանսական աղբյուրները նույնպես կենթարկվեն տարեկան աուդիտի՝ թափանցիկ և մրցակցային պրոցեսի միջոցով ՄԱԶԾ կողմից հաստատված աուդիտորի կողմից:

Պայմանագրի հիմնական դրույթները

- Քաղաքապետարանը ՄԱԶԾ-ի տնօրինությանն է հանձնում 92,4 մլն ՀՀ դրամի հատկացում, իսկ ՄԱԶԾ-ն ծրագրի իրականացման համար կատարում է 92,4 մլն ՀՀ դրամի հատկացում՝ պայմանագրով սահմանված ժամանակացույցով.
- Ըստ ՄԱԶԾ Գործադիր խորհրդի որոշումների եւ հրահանգների, որոնք արտացոլված են իր «Այլ աղբյուրներից ծախսերի փոխհատուցման քաղաքականության» մեջ, Հատկացումից կատարվում է ծախսերի փոխհատուցում այն անուղղակի ծախսերի դիմաց, որոնք կատարվել են ՄԱԶԾ կենտրոնական եւ հայաստանյան գրասենյակների կառույցների կողմից Կառավարման ընդհանուր աջակցության (ԿԸԱ) ծառայություններ մատուցելիս.
- Հատկացումը կառավարվում է ՄԱԶԾ-ի կողմից՝ համաձայն ՄԱԶԾ կանոնակարգերի, կանոնների եւ հրահանգների՝ կիրառելով ծրագրերի իրականացման համար նախատեսված ընդունված ընթացակարգերը.
- Ծրագրի ծախսերը եւ կառավարումը առաջնորդվում են ՄԱԶԾ կանոնակարգերով, կանոններով եւ հրահանգներով, եւ, անհրաժեշտության դեպքում, Իրականացնող գործընկերոջ կանոնակարգերով, կանոններով եւ հրահանգներով.
- Հատկացումը ենթակա է բացառապես ՄԱԶԾ ֆինանսական կանոնակարգերով, կանոններով եւ հրահանգներով նախատեսված ներքին եւ արտաքին աուդիտի ընթացակարգերին: ՄԱԶԾ-ն քաղաքապետարանի պահանջով տրամադրում է ֆինանսական եւ այլ հաշվետվություններ՝ պատրաստված ՄԱԶԾ հաշվետվական ընթացակարգերի համաձայն.
- ՄԱԶԾ-ն ծանուցում է քաղաքապետարանին, երբ հատկացմանն առնչվող բոլոր աշխատանքներն ավարտվում են.
- Երկու կողմերի միջև կայացած քննարկումներից հետո և պայմանով, որ հատկացման արդեն ստացված վճարումները ծրագրի տրամադրության տակ գտնվող այլ միջոցների հետ միասին բավարար են ծրագրի իրականացման ընթացքում ստանձնած հանձնառությունները եւ պարտավորություններն իրականացնելու համար, սույն Համաձայնագիրը կարող է դադարեցվել ՄԱԶԾ-ի կամ քաղաքապետարանի կողմից: Համաձայնագիրը դադարում է

գործել կողմերից որևէ մեկի՝ Համաձայնագիրը դադարեցնելու որոշման մասին մյուս կողմին համապատասխան ժամկետում գրավոր ծանուցելուց հետո.

- Անկախ Համաձայնագրի դադարեցումից, ՄԱԶԾ-ն շարունակում է տնօրինել հատկացման չօգտագործված վճարումները մինչեւ հատկացման միջոցով ֆինանսավորված աշխատանքներն իրականացնելիս առաջացած բոլոր հանձնառությունների եւ պարտավորությունների բավարարումը եւ այդ աշխատանքների պատշաճ եզրափակումը: